



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ  
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

**ՈՒՂԵՐԶ**

*Հայաստանի Հանրապետության անկախ և հայարտ քաղաքացիներ:*

*Շնորհավորում եմ բոլորիս անկախության բաղձալի տոնի առթիվ:*

*Շուրջ 700 դար չունենալով պետություն և պետականություն՝ հայ ժողովուրդը չկորցրեց երբեմնի փառքն ու անկախությունը վերագտնելու դարավոր իղձը: 27 տարի առաջ՝ 1991թ. այս օրը հայ ժողովուրդն ընտրեց անկախ պետականություն ստեղծելու ուղին: Այդ ընտրությունը նա կատարեց բանականորեն, լիովին գիտակցված, հերթական անգամ ցույց տալով իր՝ հզոր, վճռական, հայարտ ու համախմբված տեսակը: Մենք ընտրեցինք ազատությունը, հայրենասիրությունը և սեփական կյանքը հայրենիքին նվիրելու կամքը: Ի պատասխան՝ մենք ունեցանք ժողովրդավարության ճանապարհով ավելի հստակ քայլող անկախության հզոր սերունդ՝ հավատարիմ պետականաշինության սկզբունքներին:*

*Այսօր, հայ ժողովուրդը բարձրաձայն ու առանց երկնչելու հայտարարում է, որ պատրաստ է կրելու և շարունակելու այն արժեքների, գաղափարների քաղաքական ու բարոյահոգեբանական պատասխանատվությունը, որն իր առջև դրվեց 27 տարի առաջ:*

*Եկեք միասին և մեծ պատասխանատվությամբ կերտենք հայ ժողովրդի երազանքների հայրենիքը, քանի որ մենք հիմա ուժեղ ենք ոչ միայն մեր անկախ պետականությամբ, այլև՝ մտքով, հոգով ու արդեն իսկ հեղափոխական սերնդով:*

*Միրելի համաքաղաքացիներ, անկախությունը բացարձակ արժեք է, պահենք և պահպանենք այն աչքի լույսի պես՝ դարձնելով մեր կենսունակության առհավատյան:*

*Կեցցե՛նք մենք և կեցցե՛ Հայաստանի Հանրապետության վաղվա օրը:*

**Հարգանքով՝  
Հրազդան համայնքի ղեկավարի  
պաշտոնակատար՝**

**L. ՍՏԵՓԱՆՅԱՆ**